

ՅԱՐՈՒԹԵԱՆԷՆ ԵՏՔ ՀԻՆԳԵՐՈՒՊ ԿԻՐԱԿԻ

27 ԱՊՐԻԼ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1-2
Բացատրութիւն	էջ 2-3
Ժամանակացոյց եւ Ծանուցում	էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ

«ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ»

ԳԻՐՔԷՆ

(20.17-38)

Միլիտոսէն Պօղոս լուր զրկեց Եփեսոս եւ եկեղեցւոյ երէցները իր քով կանչեց: Երբ անոնք եկան, ըսաւ անոնց.

«Դուք անձամբ գիտէք թէ Ասիա գալուստ առաջին օրէն ի վեր ի՛նչպէս վարուեցայ ձեզի հետ, ամբողջ այս ժամանակամիջոցին: Ամենայն խոնարհութեամբ եւ յաճախ արցունքով ծառայեցի Աստուծոյ, հրեաներու նիւթած բոլոր փորձութիւնները կրելով: Գիտէք թէ բնաւ չքաշուեցայ ձեզմէ, օգտակար բաներու մասին խօսեցայ եւ սորվեցուցի ձեզի, հրապարակաւ ըլլալ թէ տան մէջ: Թէ՛ հրեաներուն եւ թէ՛ հեթանոսներուն տուի նոյն վկայութիւնը եւ պատգամը՝ ապաշխարութեամբ Աստուծոյ դառնալու եւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հաւատալու:

«Հիմա, ահա ասիկ, Սուրբ Հոգիին մղումով Երուսաղէմ կ'երթամ: Չեմ գիտեր թէ հոն ի՛նչ պիտի պատահի ինծի: Միայն գիտեմ թէ ամէն մէկ քաղաքի մէջ Սուրբ Հոգին կ'ազդարարէ ինծի՝ ըսելով թէ բանտարկութիւն եւ նեղութիւն կը սպասեն ինծի: Բայց հոգս չէ. ինծի համար կարեւորը կեանքս չէ, այլ կ'ուզեմ ուրախութեամբ իր վախճանին հասցնել սկսած գործս, այն պաշտօնը որ Տէր Յիսուս տուաւ ինծի՝ Աստուծոյ շնորհքը աւետարանելու:

«Հիմա գիտեմ թէ այսուհետեւ պիտի չտեսնէք զիս: Եկայ ձեզի բոլորիդ, շրջեցայ եւ Աստուծոյ արքայութիւնը քարոզեցի, եւ ահա ասիկ կը յայտարարեմ այսօր թէ խիղճս հանդարտ է,

որովհետեւ առանց քաշուելու յայտնեցի ձեզի Աստուծոյ կամքը: Հսկեցէ՛ք ձեր անձերուն եւ ձեր ամբողջ հօտին, որուն տեսուչ կարգեց ձեզ Սուրբ Հոգին: Հովուեցէ՛ք Քրիստոսի եկեղեցին, զոր ան իր արեամբ զնեց: Որովհետեւ գիտեմ թէ իմ մեկնումէս վերջ յափշտակիչ գայլեր պիտի մտնեն ձեր մէջ, որոնք պիտի չխնայեն հօտին: Ձեր մէջէն եւս պիտի ելլեն շատեր որոնք սխալ բաներ պիտի ուսուցանեն, հաւատացեալները իրենց ետեւէն տանելու համար: Հետեւաբար արթուն եղէք, յիշեցէ՛ք թէ ի՛նչպէս երեք տարի անդադար գիշեր ու ցերեկ արցունքով խրատեցի իւրաքանչիւրդ: Եւ հիմա ձեզ կը յանձնեմ Աստուծոյ եւ իր շնորհքի աւետարանին, որ կրնայ ձեզ հոգեւորապէս աճեցնել եւ իր բոլոր սուրբերուն ժառանգակից դարձնել: Ոեւէ մէկու արծաթին, ոսկիին կամ հագուստին չցանկացի: Դուք ինքնին գիտէք թէ իմ այս ձեռքերովս շահեցայ եւ հոգացի թէ՛ իմ եւ թէ՛ ընկերակիցներուս պէտքերը: Եւ կեանքիս օրինակով ցոյց տուի՝ թէ այսպէս պէտք է աշխատիլ եւ տկարներուն օգնել, յիշելով Տէր Յիսուսի այն խօսքը, թէ “Աւելի երջանկաբեր է տալը քան առնելը”»:

Իր խօսքը վերջացնելէ ետք, Պօղոս բոլորին հետ ծունկի եկաւ եւ աղօթեց: Բոլորը սկսան լալ եւ Պօղոսի վզին փաթթուելով կը համբուրէին զինք: Կը մորմոքէին մանաւանդ անոր համար որ կ'ըսէր՝ թէ այլեւս զինք պիտի չտեսնեն: Ապա անոր ընկերակցեցան մինչեւ նաւ:

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ

(3.1-6)

Տեսէք, թէ ի՛նչպիսի սիրով Հայրը մեզ սիրեց, ուզելով որ Աստուծոյ որդիներ կոչուինք, եւ արդարեւ Աստուծոյ որդիներն ենք: Աշխարհը մեզ չի ճանչնար, որովհետեւ չճանչցաւ զայն:

Միրելիներ, այժմ Աստուծոյ որդիներ ենք: Թէ ի՛նչպէս պիտի ըլլանք յետոյ՝ չենք գիտեր

տակաւին. բայց գիտենք, թէ երբ Քրիստոս յայտնուի՝ իրեն նման պիտի ըլլանք, որովհետեւ զինք պիտի տեսնենք իր իսկութեան մէջ: Ով որ այս յոյսը ունի՝ ինքզինք կը մաքրէ, ինչպէս որ Քրիստոս ինք մաքուր է:

Ով որ կը մեղանչէ՝ Աստուծոյ օրէնքը կը խախտէ, եւ մեղքը ինքնին օրէնքին խախտումն է: Գիտէք թէ Քրիստոս յայտնուեցաւ մեր մեղքերը ջնջելու համար, եւ թէ իր մէջ մեղք չկայ: Ով որ Քրիստոսի միացած կը մնայ՝ չի մեղանչեր. իսկ ով որ կը մեղանչէ՝ զայն երբեք տեսած ու ճանչցած չէ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(9.39-10.10)

Յիսուս ըսաւ. «Աշխարհ եկայ յայտնելու թէ որո՞նք են կոյրերը եւ որոնք՝ տեսնողները. որպէսզի կոյրերը տեսնեն եւ անոնք որ կը տեսնեն՝ կուրնան»: Փարիսեցիներէն ոմանք որոնք իր շուրջն էին, լսեցին ասիկա եւ հարցուցին. «Արդեօք մե՞նք ալ կոյր ենք»: Յիսուս անոնց պատասխանեց. «Եթէ կոյր ըլլայիք, մեղք պիտի չունենայիք. բայց քանի կ'ըսէք թէ կը տեսնէք, կը նշանակէ թէ ձեր մեղաւոր ըլլալը կը հաստատէք:

«Հաստատ գիտցէք, ան որ ոչխարներուն փարախը դռնէն չի մտներ, այլ ուրիշ տեղէ կը մագլցի, անիկա գող է եւ աւազակ. իսկ ան որ դռնէն կը մտնէ, անիկա ոչխարներուն հովիւն է: Դռնապանը դուռը կը բանայ անոր եւ ոչխարները իր ձայնին կը հետեւին: Իրենց անուններով կը կանչէ իր ոչխարները եւ դուրս կը տանի զանոնք: Եւ երբ իր ոչխարները դուրս կը հանէ, ի՞նք կ'առաջնորդէ, եւ ոչխարները կը հետեւին իրեն, որովհետեւ իր ձայնը կը ճանչնան: Օտարին չեն հետեւիր. ընդհակառակը, կը փախչին անկէ, որովհետեւ օտարներուն ձայնը չեն ճանչնար»:

Յիսուս այս առակը խօսեցաւ անոնց, սակայն անոնք չհասկցան թէ ի՞նչ ըսել կ'ուզեր իրենց: Ուստի Յիսուս կրկին ըսաւ անոնց. «Հաստատ գիտցէք, թէ ե՛ս եմ ոչխարներուն դուռը: Բոլոր անոնք որոնք ինձմէ առաջ եկան, գող էին եւ աւազակ. բայց ոչխարները անոնց չհետեւեցան: Ես եմ դուռը. ով որ ինձմէ անցնելով ներս մտնէ՝ պիտի փրկուի. պիտի մտնէ եւ ելլէ եւ ճարակ գտնէ: Գողը կու գայ միայն գողնալու, սպաննելու եւ փճացնելու համար: Ես եկայ որպէսզի կեանք ունենան, եւ լեցուն կեանք ունենան»:

ԺԳ.

ԿԱՊՈՂՅ ԿԻՐԱԿԻ

Հարցումներ.

- 1.- Յինունքի Զ. Կիրակիին մասին:
- 2.- Երկինքի՞ մասին:
- 3.- Ս. Գրային ընթերցումները:

Պատասխաններ.

1.- Յինունքի Զ. Կիրակիին անուն մը չունի եւ մասնաւոր յիշատակութիւն մըն ալ չ'ըներ: Բացթողո՞ւմ մը: Շնորհք արքեպիսկոպոս այս առնչութեամբ հետեւեալը գրած է. «Որչափ փափաքելի ու պատշաճ պիտի ըլլար սակայն, գոյներով ողողուած գարնան այս եղանակին, զայն ալ օժտուած տեսնել գոյնով մը, որ իր ուրոյն լոյսը ձգած ըլլար Յինանց շրջանին բազմերանգ երեսին մէկ կողմին վրայ: Արդարեւ կ'արժէր որ Կանաչի եւ Կարմիրի կողքին ունենայինք ձերմակ եւ Կապոյտ Կիրակիներ եւս, նշելու համար, զգալի ու զուարթ ձեւի տակ, այս Կիրակիներուն յատուկ խորհուրդները»: Շնորհք սրբազան Ս. Խաչի Երեման տօնին համար տուած է նաեւ «Լուսապայծառ Կիրակի» անունը, որովհետեւ անոր մէջ «պայծառափայլ ու ակնախտիղ լոյս» տեսած է: Իսկ Զ. Կիրակիի Ս. Գրային ընթերցումներուն «հիմնական գաղափարներէն» մէկը յոյսը տեսնելով, եւ յատկապէս մեկնելով Յովհաննէսի Ա. Նամակի 3.1-4 համարներէն, յարմար դատած է զայն «Կապոյտ Կիրակի» կոչել: Ծանօթ է, որ կապոյտ գոյնը խորհրդանշան է յոյսի:

Թերեւս «Կապոյտ» որակումը կը պատշաճի այս Կիրակիին այլ հասկացողութեամբ մը. նախորդ Կիրակիին կը յիշատակէր երկինքին մէջ Ս. Խաչին Երեւումը. իսկ Համբարձման դէպքը կը պատմէ Քրիստոսի երկինք բարձրանալը: Յատկօրէն երկինքին վրայ սեւեռում մը կայ Յինունքի այս հանգրուանին: Արդ, «Կապոյտ Կիրակի» անունը գուցէ ծառայէ անդրադառնալու Ս. Գրային եւ մանաւանդ Յիսուսի խօսքերուն մէջ «երկինք»ի ընկալումին: Ինչպէ՞ս հասկցուած է երկինքը Հին Կտակարանին մէջ: Եւ Յիսուս ինչպէ՞ս հասկցած է «երկինք»ը: Այս հարցումներուն պատասխանները կ'օգնեն սխալ պատկերացումներու եւ միտքերու մէջ չիյնալու համար:

2.- Աստուածաշունչին մէջ երկինքին պատմութիւնը երկար է: Անոր գլխաւոր երեք կէտերը պիտի համառօտեմ այստեղ:

Հնագոյն ժամանակներէն կու գայ այն ընկալումը թէ՛ երկինքը թանձրական (ֆիզիքական) իրականութիւն մըն է: Ծնունդներու Գիրքին մէջ կը

կարգանք. «Եւ Աստուած ըսաւ.- Զուրերուն մէջտեղ հաստատութիւն ըլլայ եւ Ղուրերը Ղուրերէն գատէ: Աստուած հաստատութիւնը ըրաւ, ու հաստատութեան տակ եղած Ղուրերը հաստատութեան վրայ եղած Ղուրերէն գատեց, եւ այնպէս եղաւ» (Ծն 1.6-8): Կար ժամանակ երբ կը կարծուէր, թէ երկինքը հիմեր (Բ. Թգ 22.8), եւ սիւներ ունի (Յբ 26.11): Թէ՛ պատուհաններ ունի, որոնց բացուելով անձրեւները կը տեղան (Ծն 7.11, 8.2: Ես 24.18: Մղ 3.10): Թէ՛ դուռ ունի (Ծն 28.17): Թէ՛ ծայրեր ունի (Բ. Օր 4.32):

Աստուծոյ բնակավայր-երկինքի գաղափարը կրօնական զգացողութեան աւելի գարգացած հանգրուանի ծնունդ է: Հանգրուանի մը՝ երբ Աստուծոյ մօտիկութեան զգացումին քովն ի վեր՝ մարդ էակը կ'ունենար Աստուծոյ հեռաւորութեան զգացումը: Երկինքէն Աստուած կը նայի եւ կ'օրհնէ (Բ. Օր 26.15), կը բարկանայ եւ կը պատժէ (Սղ 2.5-6): Ան չըջապատուած է հրեշտակներու գօրքերով (Գ. Թգ 22.19): Պիտի գար ժամանակ, երբ եբրայական կրօնական մտածողութիւնը զԱստուած երկինքին մէջ անպարփակելի պիտի յայտարարէր («Ահա երկինք ու երկինքներու երկինքը քեզ չեն կրնար պարունակել», Գ. Թգ 8.27):

Առանց տարածուելու ըսեմ, որ երկինքին թանձրական ընկալումը պիտի երկարէր եւ տարածուէր Միջին Դարերուն ալ վրայ, մինչեւ որ հասնէր արդի գիտութիւնը եւ յայտնէր, թէ հաստատուն կամ ֆիզիքական երկինք գոյութիւն չունի:

Իսկ Յիսուսի համար ի՞նչ էր երկինքը:

Ան ֆիզիքական երկինքի գաղափարը կը բաժնէ՞ր իր ժամանակակիցներուն հետ: Անկասկած սխալ պիտի ըլլար «Հայր մեր որ յերկինս ես»-ը կամ երկինքի կապուած Յիսուսի միւս հաստատումները (Օրինակ՝ «ձեր Հայրը որ երկինքն է», Մտ 5.16) բառացիօրէն առնելը:

«Երկինք» բառը ան յաճախ կը գործածէր Աստուծոյ արքայութեան գաղափարը փոխանցելու համար (տե՛ս Մտ 5.12, 6.20, 19.21 եւ այլն): Եւ Աստուծոյ արքայութիւնը, ըստ իրեն, նիւթական վայր մը չէր, այլ հոգեկան եւ հոգեղէն իրականութիւն (տե՛ս օրինակ՝ Մտ 6.20-ը): Եւ ատիկա ժամանակին եւ միջոցին մէջ գալով հանդերձ, գանոնք անդրանցող տարեզր (dimension) է. Յիսուս Նիկոզեմոսի հետ իր խօսակցութեան ատեն ըսած է հետեւեալը. «Ո՛րք երկինք ելաւ՝ բացի Մարգու Որդիէն, որ երկինքէն իջաւ, եւ որ երկինքի մէջ է» (ՅՎ 3.13):

3.- Ի՞նչ կ'ըսեն օրուայ Ս. Գրային ընթերցումները: Առաքեալներուն Գործերը գիրքէն՝ 20.17-38: Յովհաննէս Առաքեալի Ա. Նամակէն՝ 3.1-6: Յովհաննէսի Աւետարանէն՝ 9.39-10.10:

Առաջին ընթերցումը: Պօղոս Առաքեալ աւետարանչական իր երրորդ առաքելութեան աւարտին էր, եւ կ'աճապարէր Երուսաղէմ հասնիլ նախքան Պենտէկոստէի օրը: Ծանապարհին հասած էր Միլետոս կամ Մելիտոս: Լուր կը զրկէր Եփեսոս (երկուքն ալ Փոքր Ասիոյ քաղաքներ) եւ քաղաքին

երէցները իր մօտ կը կանչէր, որպէսզի գանոնք յորդորէ հսկել իրենց անձերուն եւ իրենց յանձնուած ամբողջ հօտին, որուն տեսուչ կարգուած էին Ս. Հոգիէն: Ապա իր յորդորին պատճառը յայտնելով կ'ըսէր. «Որովհետեւ գիտեմ, թէ իմ մեկնումէս վերջ յափշտակիչ գայլեր պիտի մտնեն ձեր մէջ, որոնք պիտի չխնայեն հօտին: Ձեր մէջէն եւս պիտի ելլեն շատեր, որոնք սխալ բաներ պիտի ուսուցանեն, հաւատացեալները իրենց հետեւէն տանելու համար: Հետեւաբար, արթուն եղէք...»: Արթնութեան իր հրաւերէն ետք, Առաքեալը կը խրատէ ընչաքաղց չըլլալ: Ըստ իրեն, հաւատացեալներուն «գայլեր» է յափշտակուելու պատճառ կրնայ ըլլալ՝ հոգեւոր առաջնորդներուն ընչաքաղցութիւնը:

Երկրորդ ընթերցումը: Յովհաննէս Առաքեալ Հօր Աստուծոյ «ուզելով» հաւատացեալներուն «Աստուծոյ որդիներ» կոչուելը՝ ցոյց կու տայ իբր Անոր մեծ սիրոյն արտայայտութիւն: Աստուծոյ որդիներ ըլլալը սակայն՝ առանց պայմանի չնորհք մը չէ: Որպէսզի այդ չնորհքին մէջ մնայ հաւատացեալը, պարտաւոր է ինքզինք մաքրել այնպէս՝ «ինչպէս որ Քրիստոս ինք մաքուր է»: Մաքուր հոգիները Քրիստոսի նման պիտի ըլլան, երբ ան աշխարհի վախճանին յայտնուի, որովհետեւ զինք պիտի տեսնեն «իր իսկութեան մէջ»: Ան որ «Քրիստոսի միացած կը մնայ՝ չի մեղանչեր. իսկ ով որ կը մեղանչէ՛ գայն երբեք տեսած ու ճանչցած չէ՛»:

Երրորդ ընթերցումը: Յիսուս նոր բժշկած էր ի ծնէ կոյրը, եւ կը խօսէր իր առաքելութեան մասին, զոր կը սահմանէր իբր բացայայտում՝ «Թէ որո՞նք են կոյրերը եւ որոնք՝ տեսնողները. որպէսզի կոյրերը տեսնեն եւ անոնք որ կը տեսնեն՝ կուրնան»: Ան կ'ուզէր զգաստութեան հրաւիրել փարիսեցիները, որոնք իրենք զիրենք անմեղ կը յայտարարէին: Յիսուսի համաձայն, ով որ ինքզինք անմեղ կը տեսնէ՝ կոյր մըն է:

Յիսուսի խօսքը զինք կը ներկայացնէ որպէս «դուռ»-ը փարախին, այսինքն այն վայրին՝ ուր մտնողը «պիտի փրկուի. պիտի մտնէ եւ ելլէ եւ ճարակ գտնէ»: Ան որ Յիսուսը կ'ընդունի՝ Յիսուսի միջոցով հաւատացեալներուն մէջ կը մտնէ, գանոնք «իրենց անուններով կը կանչէ», եւ երբ գանոնք դուրս հանէ՝ «ի՛նք կ'առաջնորդէ», եւ անոնք «իր ձայնը կը ճանչնան»: Իսկ ան որ Յիսուսը չընդունի՝ կողմնակի մուտքեր կը փնտռէ, որովհետեւ գող է. եւ «գողը կու գայ միայն գողնալու, սպաննելու եւ փճացնելու համար»:

Արդ, երեք ընթերցումները միացնող պատգամը: Եկեղեցւոյ հոգեւոր պատասխանատուութեան կանչուածները տեւաբար արթուն պիտի պահեն իրենց հոգիներն ու մտքերը, որպէսզի հօտին անդամները կորուստի չմատնուին: Արթուն ըլլալու նախապայմանը բարոյական մաքրութիւնն է եւ ստանցնուած ծառայութիւնը՝ Քրիստոսեան դատանիչով կատարելը:

Հոսի
ԳԸ

**ՅԱԶՈՐԻ ԸՄԲԹՈՒՄ
ԺԱՆԱՆԿԱՅԻՆ**

Երեքշաբթի, 29 Ապրիլ 2008

10.00 > Ս. Գրային սերտողութիւն՝
Ս. ՅԱԿՈԲ Զոյրերու ժողով

Յինգշաբթի, 01 Մայիս 2008

Համբարձում
11.00 > Ս. Պատարագ

Շաբաթ, 03 Մայիս 2008

18.30 > Ս. Գրային սերտողութիւն՝
Հայ երիտասարդներուն համար

Կիրակի, 04 Մայիս 2008

09.30 > Առաւօտեան ժամերգութիւն
11.00 > Ս. Եւ անմահ Պատարագ

**ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ
ԱՂՕԹՔՆԵՐ**

Ամէն առաօտ ժամը 10.00-ին
2-10 Մայիս 2008
(բաժի Կիրակի 4 Մայիս)
ԵԿԵՂԵՅՈՅՍ ԱԷԶ

ՅԱՏՈՒԿ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ
ԱՐԴԻ ԹԵՄԱՆԵՐՈՎ՝
ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ
ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 6:30

ՀՈԳԵՒՈՐ ՀԱՄԵՐԳ

ՀՈՎԱՆԱԽՐՈՒԹԵԱՐ՝
ԳԱՆՏԱՅԻ ՀՂՅՈՅ ԹԵՄԻ
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՐ՝
Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱԶՆՈՐՊԱՆԻՍ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՅՈՅ
ԵՒ
Ս. ԳԵՐՈԳ ԵԿԵՂԵՅՈՅ

ՆՈՒՐՈՒԾ
ԱՌԱՋՆՈՐ՝
ԳԵՐՇ. Տ. ԽԱԺԱԿ
ԱՌԲ. ՅԱԿՈԲԵԱՆԻ
40-ԱՄԵԱՅ ՀՈԳԵՒՈՐ
ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԹԵԱՍԿԱՆ ՅԱՅՏԱԳՐԻՆ
ԿՐ ԱՅԱՆԿՅՈՒՆ.

ՅԱՄԱՐԿ ԳԱՍՊԱՐԵԱՆ, ՅԱՄԱՐԿ
ԳԱԲԱՍԵԱՆ, ՅԱՄԱՐԿ ԻՆՃԷՃԻԿԵԱՆ

«ՆՈՐ ԾԱՊԻԿ» ԵՐԳՁԱՆՈՒԹԵՐ՝
ԽԱՐԵՎԱՐՈՒԹԵԱՐ՝ ԷԼՅՈ ՀԱՐՊՈՅԵԱՆԻ
ԵՐԳԵՀՈՆԱՀԱՐՈՒԹԵԱՐ՝
ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆԵԱՆԻ

ՈՒՐԲԱԹ, 9 ՄԱՅԻՍ, 2008-Ի
ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 8.00-ԻՆ
Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱԶՆՈՐՊԱՆԻՍ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՅՈՅ ՄԷԶ